

19 FEB 2013

2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

Հ. Ն. Տ. Ն. — Յարգանք Վսեմ. Ծիր. Աղա- ճանեան Կաթողիկոսին	1
Հ. Ն. Տ. Ն. — Ամեն. Իգնատիոս-Պետրոս Ժ. Կաթողիկոս-Պատրիարք Կաթողիկէ Հայոց	5
Հ. Ն. Տ. Ն. — Չարէհ Ա. Կաթողիկոսի յի- շատակին	9
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԶՐԱՔԵԱՆ Հ. ՔԵՐՈՐԷ. — Կաթողիկէ Թուղ- թերու Խմբագիր մեկնութիւն (Շարք)	13
ԱՐՄԷՆ ՀՐԱՆԴ. — Փառաւոր Բուզանդ Էւ Սա. Մալխասեան	23
ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ	
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. — Պատմութիւն Հա- յոց Ազգամատոյցին (Շարք)	18
ՊԱՏՄԱԿԱՆ	
ՏԷՐ-ՄՈՎԱԶԵՍԵԱՆ Հ. ՍԱՀԱԿ. — Գնահատան պատմութիւն Բագրատունեաց թագաւո- րութեան անկումէն մինչեւ մեր օրերը (Շարք)	33
ԳՐԱԿԱՆ	
ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ. — Կախարդ	45
— Բարեկամի մը յիշատակին	46
ԱԹՄԱԺԻԱՆ ՄԱՐԻԵ. — Յուշերդ Լորտ Պայ- րնի համար	47
ՃԵԼԱԼԻԱՆ ՀԱԳՈՒՊ. — Այց	48
ՏԷՐ ՄԻՔԱԵԼԻԱՆ ՕՏԱՃԵԱՆ ՆՈՒԱՐԴ. — Զբոս	49
— Թաղարները	49
ԳՐԱՆՈՍԱԿԱՆ	
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — «Այգեկուբֆ» Հայկ Պարիկեանի	50
— «Քերթումներ» Չարէհ Մելքոնեանի	50
— «Քնար Մայիսեան» Վարդուհի	51
— «Հայրենաշունչ» Վարդուհի	52
— «Ոսկեմատան» Նազենիկ Տէր Միքա- լիսեանի	52
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՄԻՔԱԵԼԻ. — «Պատմու- թիւն Մայրիկի Հայոց» Ա. Ալբոյաճ- ճեանի	53
ՔԻՐՈՐԷԱՆ Յ. — «Պատմութիւն Հայ գաղ- թականութեան» Գ. Խո. Ա. Ալբոյաճեանի	55
— «Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցարդ» Գրիգորի	56
— «Մատենադարան» Գ. Վ. Արզաբեանի	57
— «Կոստանդին Երզնկացի — Տաղեր»	58
— «Պատմութիւն Արիստակեսի Լաստի- վերացոյ»	59
— «Յովհաննէս Կարնեցի — Տաղարան»	60
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
Հ. Ն. Տ. Ն. — «Բազմալեզ» 120րդ տարին	61
* * * Շնորհաւորական նամակներ եւ յղ- ում	62-64

	PAGE
P. N. D. N. — Honneur à S. Eminence le Card. Agagianian	1
P. N. D. N. — S. B. Ignace-Pierre XVI ^e , Patriarche des Arméniens catho- liques	5
P. N. D. N. — A la mémoire du Katho- likos Zareh Ier	9
PHILOLOGIE	
TCHERAKIAN P. CHERUBIN. — Chaî- nes exégétiques des Epîtres Catho- liques. Introduction V (Suite)	13
ARMEN HERANT K. — Faustus de By- zance et Et. Malkassian	23
LITURGIE	
HATSOUNI P. VARDAN. — Histoire du Bréviaire Arménien (Suite)	18
HISTOIRE	
DER MOVSESSIAN P. SAHAK. — His- toire critique depuis la décadence des Bagratides jusqu'à nos jours (Suite)	33
LITTERATURE	
ARSEN YERGATH. — Le sorcier	45
— A la mémoire d'un amis	46
ATHMADJIAN MARIE. — Chant à la mémoire de Lord Byron	47
DJELALIAN HAGOP. — Visite	48
DER MIKAELIAN ODADJIAN NE- VART. — Le puits	49
— Les pots	49
RECENSIONS	
HOVHANNESIAN P. VAHAN. — «Vendange» de Hayk Barighian	50
— «Poésies» de Zareh Melkonian	50
— «Lyre de Mai» de Vartouni	51
— «Souffle patriotique» de Vartouni	52
— «Livre d'or» de N. Der Mikae- lian	52
HOVHANNESIAN P. MICHEL. — «His- toire des Arméniens de Malathia» de A. Alboyadjian	53
KURDIAN F. — «Histoire de l'émigra- tion des Arméniens, vol. III» de A. Alboyadjian	55
— «Etude sur la nature de l'hom- me» de Grigor le Médecin	56
— «La Bibliothèque des Manus- crits» de G. V. Abgarian	57
— «Chansons de Kostandine d'Er- zenka»	58
— «Histoire d'Aristakes de Lasti- verte»	59
— «Recueil des chants de Jean de Karine»	60
ECHO ARMENIEN	
P. N. D. N. — La 120 ^e année de la Revue «Pazmaveb»	61
* * * Lettres de félicitation	62-64



1843 - 1963
ՀԻԱ. ՏԱՐԻ

ԹԻՒ 1 - 3
ՅՈՒՆՈՒՐ - ՄԱՐՏ

ԲԱԶՄԱՎԵԲ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXI^o année, 1963, N. 1 - 3 Janvier - Mars

Յ Ա Ր Գ Ա Ն Ք

ՎՍԵՄ. ԾԻՐ. ԱՂԱՃԱՆԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մխիթար Արքայօր նորակերտ արձանի
նաւահատիքին ցնծալին արձաղանդները
դեռ կը հնչէին մեր ականջներուն (12 Օ-
դոստ. 1962), եւ մեր սրտերը տակաւին
խանդավառ իղձերու ծփանքի մը մէջ
ընկղմած՝ զմայլանքով կը կրկնէին խոս-
քերը, զոր Վսեմ. Գերբըջ. Հոգեւոր Տէ-
րը՝ Ծիր. Աղաճանեան արտասանած էր
հանուրին համակրանքին ու ծափողոյն-
ներուն մէջ, հո՛ւս, Ս. Ղազարու զեղածի-
ծաղ ափունքին, կանաչազարդ դարաս-
տանի անդորրանքին մէջ, եկեղեցական ու
քաղաքական մեծադոյն հեղինակութիւն-
ներու ներկայութեան, հանդիսական նը-
ւաղներու ալետատան զանդիւններով,
երբ — իսկապէս մեծ անտկնկալ բոլորիս
համար — կարդայինք, արցունքը մեր
աչքին, նոյն Վսեմ. Ծիր. Աղաճանեանի
20 Օդոստոս 1962 թուակիր նամակը, ուղ-
ղուած Հայ Եթղ. Նուիրապետութեան
Արհ. Արքեպիսկոպոսներուն ու Եպիսկո-
պոսներուն, որով Վսեմ. Ծիրանաւորը կը

հրաժարէր իր Պատրիարքական ու Կաթո-
ղիկոսական բարձր պաշտօնէն:
Յուզիչ էր այդ թուղթը, որ լիովին կը
բացատրէր պատճառները այդ հրաժա-
րումին, ու միաժամանակ թարգման կը
հանդիսանար Վսեմ. Ծիր. Աղաճանեանի
սրտին ամենաջերմ զգացումներուն, հրա-
ժեշտի այդ պահուն:
Այդ արդարացի եւ ամենաճանկ պատ-
ճառները, այո՛, արդէն իսկ ծանօթ էին
բոլորիս, բայց եւ այնպէս, բաժանումի
լուրն ու պահը ունէր իր թախիժն ու կրո-
նիժը. ծանր է դաւաններուն թողուլ ի-
րենց սիրելի Հայրիկը, 25ամեայ մտեր-
մութենէ մը ետք: Ու ս'ըբան ծանր՝ Հայ-
րիկին համար:
1958ի Յունիս 15ին, Երջանկալիչատակ
Պիոս ԺԲ. Սրբղ. Պապը կը բարեհաճէր
յանձնել Վսեմ. Ծիր. Աղաճանեանի Հա-
ւատոյ Տարածման Ս. Ժողովի Նախա-
գահութիւնը, Հոռմի մէջ: Այդ նոյն օրն
իսկ, կը դրէ Վսեմ. Ծիր. Աղաճանեան

«զգացիմք որ վախճանը եկած էր մեր Պատրիարքական պաշտօնին»։ Ու հ'աւելցընէ. «Տարիները անցնելով, միշտ աւելի ստիպողական կ'երեւար մեր խղիւղ առջեւ՝ կաթողիկոս-Պատրիարքի պաշտօնէն հրաժարելու պարտականութիւնը»։

Արդարեւ, Վսեմ. Ծիր. Աղաճանեանի հողն ու խնամքը Հայ կաթողիկէ հասարակութեան փոքրիկ անդին՝ տարիներէ ի վեր կը տարածուէր աշխարհի բոլոր կաթողիկէ առաքելութիւններուն վրայ, եւ իրմէ կախում ունէին յիստուն միլիոն հաւատացեալներ, ամէն ազգէ ու գոյնէ։ Մեր Ծիրանեփառ Հայրապետը այժմ իր ձեռքին տակ ունէր ոչ լոկ երկու տասնեակ մը, այլ 750 թեմական վիճակաւորներ (Եպիսկոպոս կամ Արքեպիսկոպոս)։ ոչ թէ քանի մը հարիւրեակ կրօնաւորներ ու քահանաներ, այլ 34.000 քահանաներ ու 135.000 կրօնաւորներ ու մայրապետներ։ Հաշուենք ուրիշ հազարաւոր բարեգործական Հաստատութիւնները։

Այսպիսի նուիրական ու պատասխանատու պաշտօնով ծանրաբեռն, Վսեմ. Ծիր. Աղաճանեան, Հայ կաթողիկէ Պատրիարքութեան գործերը կը վարէր երկու անձնանուէր Ընդհ. Փոխանորդներով, որոնք իրենց «ծանօթ ձեռնհասութեամբ եւ օրինակելի անձնորոշութեամբ» անզգալի կ'ընէին մեծ Հովուապետին բացակայութիւնը Արեւելի մէջ։

Սակայն, կը գրէ Վսեմ. Ծիր. Աղաճանեան, «Յիշատի կը նկատուիմք, մէկ կողմէն, տիեզերածառալ գործը Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին, որուն վերջնականապէս լծուած էինք, Սրբգ. Քահանայապետին անդառնալի կամքով, եւ Հռոմէական ուրիշ զանազան Ս. Ժողովներու անդամակցութեան յարակից այլ հոգերը, որոնք կը պահանջէին բոլոր մեր ժամանակը եւ ամբողջ մեր ոյժերը, պարտադրելով միանգամայն տեւողական մեր ներկայութիւնը Յաւիտեանական Քաղաքին մէջ։ Կ'անդրադառնայինք միւս կողմէն, որ մեր սիրելի Հասարակութիւնը պետք

էր վայելել. ինչպէս Արեւելի միւս Համայնքները, իր Հոգեւոր Պետին գործօն ու իրական ներկայութիւնը իր Աթոռին վրայ, եւ անոր անմիջական հոգն ու հոգածութիւնը, ըստ կանոնաց»։

Ահա', ուրեմն, թէ ինչո՞ւ Վսեմ. Ծիր. Աղաճանեան կու գար «սրտի խոր կարօտով ու ցաւով հրաժեշտ առնելու՝ իբր կաթողիկոս-Պատրիարք» Արհիպատիւ Եպիսկոպոս Եղբայրակիցներէն, Պատուական եկեղեցական դասէն եւ սիրելի ժողովուրդէն։

Յուզումի զգացումներով օծուն հրաժեշտի այս խօսքերէն վերջ՝ Վսեմ. Ծիր. Աղաճանեանի սիրտը կը մնայ տակաւին իր զաւակներուն հետ, կը մնայ անբաժան եւ ընդմիշտ։ «Թէեւ այս պաշտօնի բերումով հեռու կը մնամք Ձեզմէ մարմնապէս, կ'ըսէ հրաժարող Հայրապետը, կրնամ վստահ ըլլալ, սակայն, որ հոգւով, սրբտով ու մտածութեամբ միշտ Ձեզի հետ եմք։ Թէեւ չունինք այլեւս Պատրիարքութեան անմիջական պատասխանատուութիւնը, սակայն անփոփոխ կը մնան սէրը ու փարութիւնը մեր Պատուական Հասարակութեան ու Նահատակ ազգին հանդէպ, եւ կամքը անոնց ծառայելու, հնարաւորութեան սահմաններու մէջ»։ Հուսկ կը փակէր իր հրաժեշտի խօսքերը, բովանդակ Հայութեան մաղթելով «սէր, միութիւն, ազատութիւն, պայծառութիւն»։

Ուրեմն, Վսեմ. Ծիր. Աղաճանեան կը բաժնուի իր Պատրիարքական անձուկ սահմաններէն, ընդարձակուելու համար տիեզերական եկեղեցւոյ ծոցին մէջ, գոհուելու համար առաւելագոյն չափով Ս. եկեղեցւոյ պայծառութեան եւ սուրբ հաւատքի տարածումին՝ ի սիրելու աշխարհի։ Այս է որ կը միջնորդէ մեզ բաժանումի պահուն եւ կը լեցնէ մեր սրբտերը խանդավառ զգացումներով, յարգանքի ամենախոնարհ արտայայտութեամբ ողջունելու հրաժարող Ծիր. Հայրապետը, եւ մաղթելու նորանոր յաջողութիւններ աշխարհի չորս ծագերուն, ուր՝ իր միջոցով պիտի տարածուին նաեւ



12 Օգոստոս 1962 - Վսեմ. Ծիր. Աղաճանեան կը դրուատէ Մեծն Միքիթարի գործը, արձանի բացման հանդէսի պահուն։

մեր Նահատակ Ազգին անունն ու արժանիքները։ Քսանեւհիդամեայ բեղուն Պատրիարքութեան մը փորձառութիւնն իր ուսին՝ ժիր սերմնացանն է Ան հիմա, որ լիարուսն կը ցանէ Խաչին ճանապարհով ի սիրելու հեթանոսաց։

Յանէ', սիրելի Հայրապետ, ցանէ՛ Փլիպպեաններէն մինչեւ Ափրիկէ, Աւստրալիայէն մինչեւ Հնդկաստան կամ Ճափոն, ցանէ ամէն կողմ, Աւետարանի կենսատու հատիկներուն հետ, նաեւ շնորհքը հայ մտքին, հայ սրտին ու հայ հոգիին, որ այնքան առատօրէն կը զեղու քու օրհնելով Աջդ, խոնարհութեան եւ ազնիւ ժպիտի մը ընդմէջէն։

«Բազմավեպ» զանազան առիթներու մէջ, երախտագիտական զգացումներով

ու սիրով երկար տեղեկութիւններ հաղորդած է Վսեմ. Ծիր. Աղաճանեանի կեանքին ու գործունէութեան մասին, յատկապէս Ծիրանաւորութեան աստիճանի ամբարձման նուիրած բացառիկով (1946, թ. 3-5)։

Անկէ առաջ, սակայն, եւ անկէ ետք, շատ անգամներ, Միքիթարեան Միաբանութիւնը առիթ ունեցած է մօտէն ճանչնալու եւ վայելելու Ծիր. Հայրապետին քաղցր մտերմութիւնը, սկսած անոր պատանութեան օրերէն։

Երիտասարդ Աղաճանեան Վարդապետի հիմնած վարժարանը, Թիֆլիսի մէջ, որուն ճակատին դրոշմուած էր Ալիշան անունը, ճշմարիտ վկան է անոր ազգասիրական զգացումներուն եւ Միքիթարեան Ուխտին հանդէպ տածած սիրոյն։

Աւելի ուշ, երբ աշխարհի չորս կողմն

արդեն ծանօթ էր Աղաճանեան Ուսուցչապետի անունը, համալսարանի երկարամեայ դասաւանդութիւններով հոգակուած, աւելի եւս կ'ամբանային այդ սիրալիր կապերը:

1936ի Հոկտ. 18ին, Ս. Ղազարու Մայրավանքին մէջ, Գերպ. Աղաճանեան եւ պիսկոպոս՝ վեց նորընծայ օծեալներ կը նուիրէր սուրբ Սեղանին:

1937ին, հազիւ բարձրացած Կաթողիկոսական դահլ, իր առաջին գործերէն մէկը կ'ըլլար պաշտօնական աղերսադիր մը ուղարկել առ Ս. Գահը, ստորագրութեամբ Պատրիարքութեան բոլոր Եպիսկոպոսներուն, ի նպատակ դատի երանացուցման Մխիթար Արքային:

1945ին, պատերազմի աղէտներէն ետք, սիրով կու գար Ս. Ղազար, յանձն առնելով տաժանադին ու երկար ճամբորդութիւն մը (Հոռոմ - Միւրան - Վենետիկ), սիրով եւ համար Մխիթարի զաւակները եւ անոնց յարկերուն տակ ապաստանող պատերազմի արհաւիրքներէն հազիւ ճողպրած հարիւրաւոր դաղթական հայորդիները:

1946ին, նորընտիր Ծիրանաւոր Աղաճանեանին յարգանքի կ'ելլէր ամբողջ Միաբանութիւնը, Հոռոմի մէջ, հայ ծէսին հարադատութեամբ պանծացնելու Սիբասեան մատրան հանդէսները: Այդ առթիւ էր որ Մխիթարեան ձեմարանի Պատուոյ Նախագահի բարձր տիտղոսը կը տրուէր Ծիր. Աղաճանեանի, առանձին հանդէսով մը:

1950ի Սեպտեմբերին, դարձեալ կը տեսնենք զինք Ս. Ղազարու մէջ, նախագահելու Մխիթար Արքային մահուան Բ. դարադարձի մեծ հանդէսներուն, ուրիշ երեք Արքեպիսկոպոսներու հետ:

1958ի Ապրիլին, Ս. Մարկոսի ամպիրոնէն կը քարոզէ բազմահազար խալաքներու, Մուրատ Ռափայէլեանի զահլիճին մէջ կ'ողբակոչէ նահատակներու յիշատակը, Մխիթար Արքային յարկին տակ կը պանծացնէ մեծ Սեբաստացիին գործը:

Այդ բարեպատէս առիթով էր որ, վա-

նական շրջանակի մէջ տօնելով Ծիր. Հայրապետին Պատրիարքութեան քսանամեայ գործունէութիւնը, Ուխտիւ Ընդհ. Արքային՝ Գերպ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան կը վերակոչէր Ն. Վ. Տէրութեան «Մեծամեծ գործերը, սիրած անբաւ բարիքները, կատարած շինարար գործերը՝ Հայ Կաթողիկէ համայնքը օծտելով նոր եկեղեցիներով, դպրոցներով, կղերանոցներով, նոր քեմերու հաստատութեամբ եւ մամուլով», ու մաղթանքի անկեղծ զգացումներ կը յայտնէր Ծիր. Հայրապետին, «որ իբրեւ նշմարիտ հովիւ քրիստոսական հօտին, խօսած էր տոնամային Հայրապետներու լեզուով եւ շնորհով, առաջնորդելու համար Հայ ժողովուրդը դէպի Աւետարանի լոյսը, դէպի իրական երջանկութիւնը»:

1959ի Նոյեմբեր 18ին, երբ բանախօսութեան մը համար կու գար Վենետիկ, սիրալիր այցելութեամբ մը կը պատուէր ու կը մխիթարէր Միաբանութեան բոլոր անդամները անդամ մը եւս:

1962ի Օգոստոսին պաշտօնապէս կու գար Հոռոմէն, բերելով Սրբ. Պապին Յովհաննէս ԻԳ.ի օրհնութեան գիրն ու նուէրները, նախագահելու Մխիթար Արքային պղնձէ նորակերտ արձանի բացման հանդէսին: Այդ օրը մեծ ուրախութիւնն ալ ունեցանք իր Հայրապետական Աջէն օծուած տեսնելու երիտասարդ երկու նորընծաներ եւս, որոնք կու գային Մխիթարեան երգութեաներու ոյժ երբ թարմացնելու:

Այս բոլորին դիմաց, հանուր Կաթողիկէ հայութեան հետ, կու գանք երախտագէտ սրտով հայցելու իր հայրական օրհնութիւնը, որ մեղի համար զբաւական մ'է ապագայ նուաճումներու. վստահացնելով միաժամանակ թէ անպակաս պիտի ըլլայ մեր ալ խոնարհ աղօթքը վասն կենաց Հայրապետին, երկար ու արդիւնալից գործունէութեան մը անկեղծ ու սրտաբուլի մաղթանքներով:

Հ. Ն. Տ. Ն.

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ԻԳՆԱՏԻՈՍ - ՊԵՏՐՈՍ ԺԶ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐԷ ԿԹՂ. ՆԱՅՈՑ

Ն. Վ. Տ. Ծիրանաւոր Գրիգոր-Պետրոս ԺԶ. Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքի հրաժարականէն վերջ, հայ կաթողիկէ համայնքին Եպիսկոպոսական սինոդոսը կը զուգարուէր Պէյրութի Պատրիարքարանի եկեղեցւոյն մէջ, ինը Եպիսկոպոսներով, 1962ի Սեպտ. 2ին: Յաջորդ առաւօտն իսկ, երկրորդ քուէարկութեան, Կաթողիկոս-Պատրիարք կ'ընտրուէր Արհիպատիւ Այ. Արք. Պաթանեան, որ արդէն իսկ 25 տարիէ ի վեր կը վարէր Պատրիարքական Ընդհ. Փոխանորդի, եւ 1958էն ստղին՝ Տեղապահի բարձր պաշտօնները:

Արհիպատիւ Պաթանեան Արքեպիսկոպոս բարձրանալով Կաթողիկոսական դահլին վրայ, կ'ընտրէր սեփական անուն մը. Իգնատիոս Պետրոս ԺԶ:

Իգնատիոս անունը ընտրելով, կ'ողբէր յայտնել իր երախտագիտութիւնն ու սէրը հանդէպ Իգնատիոս Արքեպիսկոպոս Մարտինի, որ 1915ին նահատակուեցաւ Մարտինի իր բազմահազար ժողովուրդին հետ: Նորընտիր Կաթողիկոսն եւս Մարտինի է ու նահատակ Արքեպիսկոպոսին թելադրութեամբ նուիրուած է եկեղեցական ասպարէզին:

Իսկ Պետրոս անունը նուիրական դարձած է բոլոր հայ կաթողիկէ Պատրիարքներուն, երկու դարէ ի վեր:

Նորընտիր Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիւ Իգնատիոս Պետրոս ԺԶ. ծընած է Մարտին, 1899ի Փետր. 15ին:

Մկրտութեան անունով Ալոգիոս, փոքր տարիքէն կը նուիրուի Աստուծոյ ծառայութեան: Հեռանալով իր ծննդավայրէն, նախ Կ. Պոլսոյ Վեղարաւոր Հայրերու Կղերանոցին մէջ կը բոլորէ ուսումնական նախնական ընթացքը. ապա կ'անցնի Հոռոմի Քհնյայ. Լեւոնեան Վարժարանը, եւ հետեւելով համալսարանական ընթացքներու, փայլուն յաջողութիւններով կ'ընդունի փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան վարդապետական զոյգ աստիճանները:

Նահատակ ծնողներու զաւակ, Ալոգիոս Պաթանեան, 1921ի Յունիս 29ին կը դառնայ նահատակ Աստուծոյ սուրբ սեղանին, քահանայական օծութեամբ:

Նորընծայ վարդապետ Գեր. Ալոգիոս Պաթանեանի առաջին առաքելաւայրը կ'ըլլայ Եպիսկոպոս, ուր ցոյց կու տայ մեծ նուիրում եւ փայլուն կարողութիւններ:

1929ին կ'անցնի Պաղտատ, իբր օգնական Յակոբ Արքեպիսկ. Նեսիմեանի, որուն կը յաջորդէ 1933ին, Մարտինի Աթոռին վրայ:

Պաղտատի մէջ, երիտասարդ Պաթանեան Արքեպիսկոպոս շինարարական ու կազմակերպչական կարեւոր գործեր առաջ կը տանի. իր ժամանակէն է Քարրատայի հայ կաթողիկէներու գեղեցկաչէն եկեղեցին:

1938ին, Ամենապատիւ Աղաճանեան նորընտիր Կթղ. Պատրիարքը զինք կը հրաւիրէ Պէյրութ, իբր Պատրիարքական